ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2022թ. N 575-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՆԻԵԼ ԱՎԱԳԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 82-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ Դանիել Ավագի Դանիելյանին 2022 թվականի դեկտեմբերի 19-ից ազատել պաշտոնից՝ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 19
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2022թ. N 576-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Անահիտ Բաշրաթյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Անահիտ Բաշրաթյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան թիվ 40 քոթեջի և հողամասի (վկայական 1799264, տրված 2004 թվականի հուլիսի 20-ին) անշարժ գույքի հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Հայրենադարձ թաղամաս 40:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

20.12.2022

X

VERIFIED OCSP 20.12.2022 17:50:17 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 20
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2022թ. N 577-Ա

ՆՈՐԱՅՐ ԿՈՒՅՈՒՄՉՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Նորայր Ռուբենի Կույումչյանի հայտը՝ ***որոշում եմ.***

1.Նորայր Ռուբենի Կույումչյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամասի 6-րդ փողոց 9 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.052 հեկտար (կադաստրային ծածկագիր 07-051-0140-0036) հողամասում այգետնակի վերակառուցման, վերնահարկի ավելացման և բացոթյա հարթակի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Նորայր Ռուբենի Կույումչյանին՝

1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման.

2) վերակառուցման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

21.12.2022

X

VERIFIED OCSP 21.12.2022 18:09:54 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 21
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2022թ. N 578-Ա

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված արխիվային տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիրն ու Սվետլանա Սարոյի Միրզոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Քաղաք Բյուրեղավան 2-րդ շարքի համար 18 անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր 07-003-0040-0014) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 2-րդ փողոց 18:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 22.12.2022 17:46:30 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 22
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2022թ. N 579-Ա

ՍՏԵՓԱՆ ԱՇՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ՋՈՒԳԱՐԱՆՆ ՈՒ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-12-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի ու հաշվի առնելով «ԹԻՎ 28 ՇՄՇ» բաց բաժնետիրական ընկերության 2022 թվականի դեկտեմբերի 15-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.00735 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տված 2022 թվականի նոյեմբերի 04-ի N Աբ-2458 արխիվային տեղեկանքը, չափագրման հատակագծերն ու Ստեփան Գրիգորի Աշչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աբովյանի շրջանի Նուռնուս այգետարածքի թիվ 7 տեղամասի թիվ 294 հասցեի անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր 07-051-0102-0006) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամասի 2-րդ փողոց 294:

2. Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ճանաչել Ստեփան Գրիգորի Աշչյանի սեփականության իրավունքը իրեն պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0102-0006) փաստացի ավել օգտագործվող 0.00735 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3. Ստեփան Գրիգորի Աշչյանին պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամասի 2-րդ փողոց 294 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0102-0006, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022K8FJYW) 0.05735 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 51.85 քմ արտաքին (43.5 քմ ներքին) մակերեսով այգետնակը, 2.4 քմ արտաքին (2.0 քմ ներքին) մակերեսով զուգարանը և 5,4 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

4.Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների համար օրինականացման վճար չի գանձվում:

5. Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.05735 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

VERIFIED OCSP 22.12.2022 17:53:20 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 22
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2022թ. N 580-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված արխիվային տեղեկանքն ու Հասմիկ Գանիկի Սիմոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի թիվ 23 թաղամասի թիվ 29 անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր 07-051-0133-0023) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 3-րդ փողոց 29:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 22.12.2022 18:01:27 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 22
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2022թ. N 581-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 18 ՇԵՆՔԻ ԹԻՎ 1 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Պավել Շահվալադի Բաբայանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Պավել Շահվալադի Բաբայանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 18 շենքի թիվ 1 բնակարանի (վկայական 2709335, տրված՝ 2010 թվականի սեպտեմբերի 30-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 18 շենք 1 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 23.12.2022 16:11:51 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 23
ք. Բյուրեղավան

Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)
N 49 21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թ.

Օբյեկտ՝ **Այգետնակի վերակառուցման, վերնահարկի ավելացման և բացօթյա հարթակի կառուցման** նախագծային փաստաթղթերի մշակման համար:
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

«Աշխատանքային նախագիծ», (II կատեգորիա), միջին ռիսկայնության աստիճան
(հակիրճ բնորոշումը, հզորությունը ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 6-րդ փողոց 9 (ծածկագիր՝ 07-051-0140-0036) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.052 հա հողամաս**
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **Նորայր Ռուբենի Կույումչյան (ք. Երևան, Արաբկիր, Գյուլբեկյան փողոց 2 շենք 53 բնակարան), հեռ. 094989095, 055691555**
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը **սեփականության վկայական N 26052022-07-0094, կառուցապատման հայտ, Էսքիզային նախագիծ**
կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը *12ամիս*
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է *Բնակավայրերի նշանակության, բնակելի կառուցապատման*
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը **0.052 հա**
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը **Մեծ թեքությամբ ռելիեֆ, այգետնակի վերակառուցում, վերնահարկի ավելացում և բացօթյա հարթակի կառուցում**
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները *ներհամայնքային նշանակության ճանապարհներ*
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային *համաձայն հատակագծերի (սխեմաներ)*

հաղորդակցության համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

Բնակելի շինություններ, բնակավայրերի նշանակության հողամասեր, ճանապարհներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

ղեկավարվել ՀՀ գործող նորմերին համապատասխան ըստ միջավայրի պայմանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հատակագծային լուծումները ըստ պատվիրատուի առաջադրանքի, ըստ միասնական պահանջներ սահմանող ուղեցույցի, կառուցվող նախագծի վերաբերյալ

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Պահպանել վերակառուցվող շինության հեռավորությունը կարմիր գծից

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

համաձայն կարգի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

հողի մակերս 0.052 հա.

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

1/4

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

25%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

75%

9.7. Այլ պահանջներ — **տարածքում տեղադրել ինֆորմացիոն վահանակ**

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը — ***անհրաժեշտություն չկա***

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները — **Համաձայն էսքիզային նախագծի**

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ — Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ Չկան

12.1. (*) Ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում — Կցվում է ***Անհրաժեշտություն չկա***
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում — Կցվում է ***Անհրաժեշտություն չկա***
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում — Կցվում է ***Անհրաժեշտություն չկա***
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը — ***Անհրաժեշտություն չկա***
(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ — **Չկան**

12.6. աղբահանություն — **Կնքել համապատասխան պայմանագիր աղբահանություն կազմակերպող իրավասու կազմակերպության հետ**

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — համաձայն գործող կարգի
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում — ***ապահովել հարակից տարածքի մաքրությունը,կանաչապատումը, բարեկարգումը***
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր — **Քար, երկաթ-բետոն, տուֆ, մետաղ, փայտ, ավազ և այլն՝ համաձայն նախագծի**
(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ — **շինարարության ընթացքում ստեղծել անհրաժեշտ պաշտպանական միջոցներ**
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ — **ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները համաձայն գործող կարգի**
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — **Համաձայն գործող կարգի**

19. Շրջակա միջավայրի պահպանում — ***Չիրականացնել վտանգավոր միջոցառումներ, որը կթողնի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, ըստ գործող նորմերի***
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

ճանապարհի երթևեկելի մասում չստեղծել երթևեկությանը խոչնդոտ հանդիսացող պայմաններ

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

12 (տասներկու) ամիս

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Նորոշմամբ հաստատված կարգին համապատասխան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Անհրաժեշտություն չկա

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

նախագիծը համաձայնեցնել Բյուրեղավանի համայնքապետարանի հետ և ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքներն սկսելը

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

Համաձայն գործող կարգի

27. Այլ պայմաններ

Չկան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ԲԱԼԱՍՅԱՆ**

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

ՄԱՐԱՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ